


## Ընկերության ղեկավարության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ Ընկերության կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

Ղեկավարություն

|                        |                                                  |                                                                                      |                     |
|------------------------|--------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------|---------------------|
| <b>Դավիթ Աթանեսյան</b> | <b>Գլխավոր տնօրեն</b>                            |   | <b>26.08.2026թ.</b> |
| (անուն, ազգանուն)      | (պաշտոն)                                         | (ստորագրություն)                                                                     | (ամսաթիվ)           |
| <b>Գայանե Կորեկյան</b> | <b>Գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ</b> |  | <b>26.08.2026թ.</b> |
| (անուն, ազգանուն)      | (պաշտոն)                                         | (ստորագրություն)                                                                     | (ամսաթիվ)           |





**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ**

**<<ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՈՒՎԿ ՍՊԸ-Ի  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ**

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

<<Առաջին Հիփոթեքային Ընկերություն>> ՈՒՎԿ ՍՊԸ-ի կառավարման մարմնի՝  
միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Ընկերության բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի  
ներկայացում,
- Կարևոր դեպքերի ներկայացում,
- Ընկերության հնարավոր հետագա զարգացման ներկայացում:

Սույն զեկույցը պատրաստված է ֆինանսական հաշվետվությունների միջազգային  
ստանդարտների /ՖՀՄՍ/ համաձայն:

---

## ԱԿՏԻՎՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Ընկերության ակտիվները կազմել են 7,889,868 հազ. ՀՀ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի տվյալներով 8,555,412.00 հազ. ՀՀ դրամ: 2026 թ-ի առաջին կիսամյակում ակտիվները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 665,544 հազ. ՀՀ դրամով:

| 1      | Ակտիվներ                                                               | 30.06.2026       | 30.06.2025       |
|--------|------------------------------------------------------------------------|------------------|------------------|
| 1.1    | Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ                                  | 684,461          | 780,047          |
| 1.2    | Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ |                  | 576,705          |
| 1.3    | Բանկերում տեղաբաշխված միջոցներ                                         |                  |                  |
| 1.4    | Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ                                  | 872,727          |                  |
| 1.5    | Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ                       | 5,607,108        | 6,464,458        |
| 1.6    | Վաճառքի համար նախատեսված ներդրումներ                                   |                  |                  |
| 1.7    | Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ                        |                  |                  |
| 1.8    | Վարձակալության գծով ստացվելիք գումարներ                                | 9,438            | 12,135           |
| 1.9    | Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ                                |                  |                  |
| 1.10   | Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում                         | 3,680            | 3,680            |
| 1.11   | Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում    | 5,663            | 6,969            |
| 1.11.1 | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ                               |                  |                  |
| 1.12   | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ                              | 237,310          | 258,642          |
| 1.13   | Հետաձգված հարկային ակտիվներ                                            |                  |                  |
| 1.14   | Ստացվելիք տոկոսներ                                                     |                  |                  |
| 1.15   | Այլ ակտիվներ                                                           | 469,481          | 452,776          |
|        | <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                                              | <b>7,889,868</b> | <b>8,555,412</b> |

**Հաճախորդներին տրված  
վարկեր և այլ  
փոխադրվածություններ**

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին դիտվել է հաճախորդներին տրված վարկերի 857,350 հազ. դրամի նվազում՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ մնացորդները կազմելով 5,607,108 հազ. դրամ:

Ստորև ներկայացվում է վարկային ներդրումների և վարկերի արժեզրկման պահուստների փոփոխությունը 2026 և 2025թթ. առաջին կիսամյակի դրությամբ:

**1. Վարկեր հաճախորդներին**

|                                     | <i>2026թ.ի I-ի<br/>կիսամյակ<br/>հազ. դրամ</i> | <i>2025թ.ի I-ի<br/>կիսամյակ<br/>հազ. դրամ</i> |
|-------------------------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------|
| Հաճախորդներին տրված համախառն վարկեր | 5,616,071                                     | 6,503,739                                     |
| Վարկերի արժեզրկման պահուստ          | (8,963)                                       | (38,281)                                      |
|                                     | <b>5,607,108</b>                              | <b>6,464,458</b>                              |

**Արտարժույթային  
գործառնություններ**

Հաշվետու կիսամյակում Ընկերության արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 8,750,141 ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 4,977,460 ՌԴ ռուբլի,

Եվրոյով գործարքների ծավալը՝ 49,844 Եվրո

Արաբական դիրհամով գործարքների ծավալը՝ 15,205 Դիրհամ

Կանադական դոլարով գործարքների ծավալը՝ 1,600 Կանադական դոլար

Անգլիական ֆունտ ստերլինգով գործարքների ծավալը՝ 220 Անգլիական ֆունտ ստերլինգ

Արտարժույթային գործառնություններից հաշվետու կիսամյակում ստացված զուտ շահույթը կազմել է 22,463 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 9,778 հազ. դրամ զուտ շահույթի դիմաց:

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2026թ.-ի առաջին կիսամյակի ավարտին Ընկերության պարտավորությունները կազմել են 6,006,031 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 670,933 հազ. դրամով:

| Ֆինանսական պարտավորություններ        | 30.06.2026թ.     | 30.06.2025թ.     |
|--------------------------------------|------------------|------------------|
|                                      | հազ. դրամ        | հազ. դրամ        |
| Փոխառություններ և վարկեր             | 4,906,829        | 4,939,769        |
| Թողարկված պարտքային արժեթղթեր        | 1,035,695        | 1,065,707        |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 63,507           | 671,548          |
|                                      | <b>6,006,031</b> | <b>6,677,024</b> |

| 2. Ներգրավված վարկեր, փոխառություններ                 | 30.06. 2026թ.    | 30.06. 2025թ.    |
|-------------------------------------------------------|------------------|------------------|
|                                                       | հազ. դրամ        | հազ. դրամ        |
| Պետական մասնակցությամբ ֆինանսական կազմակերպություններ | 827,629          | 1,128,995        |
| Միջազգային ֆինանսական կազմակերպություններ             | 2,980,844        | 3,496,293        |
| Ոչ առևտրային կազմակերպություններ                      |                  |                  |
| ՀՀ Կենտրոնական բանկ                                   |                  |                  |
| Բաժնետեր                                              | 120,852          | 19,916           |
| Այլ կապակցված կողմեր                                  | 977,504          | 195,851          |
| Այլ                                                   |                  | 98,714           |
| Թողարկված արժեթղթեր                                   | 1,035,695        | 1,065,707        |
|                                                       | <b>5,942,524</b> | <b>6,005,476</b> |

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերությունն ունի վեց կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ, ինչպես նաև թողարկված և տեղաբաշխված արժեթղթեր: 2026թ. հունիսի 30-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 5,821,672 հազ. դրամ:

30.06.2026թ. դրությամբ Ընկերության՝ հիփոթեքով ապահովված արժեթղթերի ներկա արժեքը կազմել է 1,035,695 հազ դրամ:

1. Թողարկված պարտքային արժեթղթեր

|                                  | 2026թ.ի I-ի<br>կիսամյակ<br>հազ. դրամ | 2025թ.ի I-ի<br>կիսամյակ<br>հազ. դրամ |
|----------------------------------|--------------------------------------|--------------------------------------|
| Պարտատոմսեր ամորտիզացված արժեքով | 1,035,695                            | 1,065,707                            |
|                                  | 1,035,695                            | 1,065,707                            |

Կիսամյակի ընթացքում Ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ:

Թողարկված պարտատոմսերը ներառում են հետևյալ թողարկումները՝

|                                                        | Թողարկման<br>ժամկետ | Արժույթ      | Քանակ  | Եկամտա-<br>բերություն | Մարման<br>ժամկետ | Անվանական արժեք                      |
|--------------------------------------------------------|---------------------|--------------|--------|-----------------------|------------------|--------------------------------------|
|                                                        |                     |              |        |                       |                  | 2026թ. 1-ին<br>կիսամյակ<br>հազ. դրամ |
| Անվանական<br>արժեկտրոնային<br>պարտատոմս<br>(ապահովված) | 2024թ. հունիս       | ԱՄՆ<br>դոլար | 20,000 | 7%                    | 2027թ.<br>հունիս | 735,780                              |
| Անվանական<br>արժեկտրոնային<br>պարտատոմս<br>(ապահովված) | 2024թ. հունիս       | ՀՀ<br>դրամ   | 3,000  | 11.8%                 | 2027թ.<br>հունիս | 300,000                              |
|                                                        |                     |              |        |                       |                  | 1,035,780                            |

Պարտատոմսերը ապահովված են Ընկերության հիփոթեքային վարկերի պորտֆելով:

## Ընդհանուր կապիտալ

Հաշվետու կիսամյակի ավարտին Ընկերության ընդհանուր կապիտալը կազմել է 1,883,837 հազ. դրամ:

/հազար  
դրամ/

| Մեկական<br>կապիտալի տարրերի<br>անվանումը                                            | Կանոնադրական կապիտալ    |           | Զուտ գումարը | Զբաղիված<br>շահույթ/վնաս | Ընդամենը  | Ընդամենը<br>կապիտալ |
|-------------------------------------------------------------------------------------|-------------------------|-----------|--------------|--------------------------|-----------|---------------------|
|                                                                                     | Կանոնադրական<br>կապիտալ |           |              |                          |           |                     |
| Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)                                          |                         |           |              |                          |           |                     |
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի<br>սկզբում<br>առ 01 հունվարի<br>2025թ. (ստուգված) | 1,000,000               | 1,000,000 | 787,787      | 1,787,787                | 1,787,787 |                     |
| Վերահաշվարկված<br>մնացորդը                                                          | 1,000,000               | 1,000,000 | 787,787      | 1,787,787                | 1,787,787 |                     |
| Համապարփակ<br>եկամուտ                                                               |                         |           | 90,601       | 90,601                   | 90,601    |                     |
| Շահութաբաժիններ                                                                     |                         |           | (110,000)    | (110,000)                | (110,000) |                     |
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի<br>վերջում<br>առ 30 հունիսի 2025թ.<br>(ստուգված)  | 1,000,000               | 1,000,000 | 768,388      | 1,768,388                | 1,768,388 |                     |
| Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)                                                |                         |           |              |                          |           |                     |
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի<br>սկզբում<br>առ 01 հունվարի<br>2026թ. (ստուգված) | 1,000,000               | 1,000,000 | 789,406      | 1,789,406                | 1,789,406 |                     |
| Վերահաշվարկված<br>մնացորդը                                                          | 1,000,000               | 1,000,000 | 789,406,     | 1,789,406                | 1,789,406 |                     |
| Համապարփակ<br>եկամուտ                                                               |                         |           | 94,431       | 94,431                   | 94,431    |                     |
| Շահութաբաժիններ                                                                     |                         |           |              |                          |           |                     |
| Մնացորդը հաշվետու<br>ժամանակաշրջանի<br>վերջում<br>առ 30 հունիսի 2026 թ.             | 1,000,000               | 1,000,000 | 883,837      | 1,883,837                | 1,883,837 |                     |

## Եկամուրներ և ծախսեր

Հաշվետու կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Ընկերության զուտ տոկոսային եկամուտները նվազել են 30,966 հազ. դրամով՝ կազմելով 129,221 հազ. ՀՀ դրամ:

### 1. Զուտ տոկոսային եկամուտ

|                                                      | <b>2026թ.ի I-ի<br/>կիսամյակ<br/>հազ. դրամ</b> | <b>2025թ.ի I-ի<br/>կիսամյակ<br/>հազ. դրամ</b> |
|------------------------------------------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------|
| <b>Տոկոսային եկամուտ</b>                             |                                               |                                               |
| Հաճախորդներին տրված վարկերից                         | 326,425                                       | 379,947                                       |
| Ժամկետային ավանդներից և ցպահանջ միջոցներից բանկերում | 4568                                          | 10,715                                        |
| Ընդամենը                                             | 330,993                                       | 390,662                                       |
| <b>Տոկոսային ծախս</b>                                |                                               |                                               |
| Ներգրավված վարկեր, փոխառություններից                 | (156,686)                                     | (184,282)                                     |
| Թողարկված արժեթղթերից                                | (45,086)                                      | (46,193)                                      |
| Ընդամենը                                             | (201,772)                                     | (230,475)                                     |
| <b>Զուտ տոկոսային եկամուտ</b>                        | <b>129,221</b>                                | <b>160,187</b>                                |

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է 2026 թվականի առաջին կիսամյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ Ընկերության եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

|                                                         | 2026թ-ի<br>ստացին<br>կիսամյակ | 2025թ-ի<br>ստացին<br>կիսամյակ |  |
|---------------------------------------------------------|-------------------------------|-------------------------------|--|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                         | 330,993                       | 390,662                       |  |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                             | (230,475)                     | (230,475)                     |  |
| <b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>                | <b>160,187</b>                | <b>160,187</b>                |  |
| Եկամուտ շահաբաժիններից                                  | 539                           |                               |  |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ               | 13,442                        | 13,052                        |  |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր                   | (643)                         | (823)                         |  |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)  | 2,676                         | 2,676                         |  |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)  | 19,425                        | 7,102                         |  |
| Այլ գործառնական եկամուտներ                              | 13,183                        | 6,246                         |  |
| <b>Գործառնական եկամուտներ</b>                           | <b>178,205</b>                | <b>188,440</b>                |  |
| Վարկերից և այլ փոխառվածություններից առաջացած կորուստներ | 30,222                        | 30,222                        |  |
| Ընդհանուր վարչական ծախսեր                               | (104,753)                     | (99,697)                      |  |
| Այլ գործառնական ծախսեր                                  | (7,896)                       | (7,896)                       |  |
|                                                         |                               |                               |  |
| <b>Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը</b>                 | <b>108,521</b>                | <b>111,069</b>                |  |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)                   | (14,090)                      | (20,468)                      |  |
| <b>Ժամանակաշրջանի շահույթ</b>                           | <b>94,431</b>                 | <b>90,601</b>                 |  |

Հաշվետու կիսամյակում Ընկերության եկամուտների կազմում կոմիսիոն վճարներից ստացված զուտ եկամուտները կազմել են 12,799 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 570 հազ. դրամով:

**Ամփոփ ֆինանսական  
տվյալներ**

|                                                                                     | 2026թ.ի I-ի<br>կիսամյակ<br>հազ. դրամ | 2025թ.ի I-ի<br>կիսամյակ<br>հազ. դրամ |
|-------------------------------------------------------------------------------------|--------------------------------------|--------------------------------------|
| <b>Ակտիվներ</b>                                                                     |                                      |                                      |
| Դրամական միջոցներ և բանկային<br>հաշիվներ                                            | 684,461                              | 780,047                              |
| Շահույթ/վնասով վերաչափվող իրական<br>արժեքով հաշվառվող ֆինանսական<br>ակտիվներ        |                                      | 576,705                              |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ<br>Ներդրումներ այլ անձանց<br>կանոնադրական կապիտալում | 3,680                                | 3,680                                |
| Հաճախորդներին տրված վարկեր                                                          | 5,607,108                            | 6,464,458                            |
| Հիմնական միջոցներ, ոչ նյութական<br>ակտիվներ                                         | 242,973                              | 265,611                              |
| Դրամական շուկայում այլ<br>տեղաբաշխումներ                                            | 872,727                              |                                      |
| Հետաձգված հարկային ակտիվ<br>Այլ ակտիվներ                                            | 478,919                              | 464,911                              |
| <b>Ընդամենը ակտիվներ</b>                                                            | <b>7,889,868</b>                     | <b>8,555,412</b>                     |
| <b>Պարտավորություններ</b>                                                           |                                      |                                      |
| Ներգրավված վարկեր, փոխառություններ                                                  | 4,906,829                            | 4,939,769                            |
| Թողարկված պարտքային արժեթղթեր                                                       | 1,035,695                            | 1,065,707                            |
| Հետաձգված հարկային<br>պարտավորություն                                               |                                      |                                      |
| Վճարվելիք գումարներ                                                                 | 40,271                               | 621,322                              |
| Այլ պարտավորություններ                                                              | 23,236                               | 50,226                               |
| <b>Ընդամենը պարտավորություններ</b>                                                  | <b>6,006,031</b>                     | <b>6,677,024</b>                     |
| <b>Կապիտալ</b>                                                                      |                                      |                                      |
| Կանոնադրական կապիտալ                                                                | 1,000,000                            | 1,000,000                            |
| Կուտակված շահույթ                                                                   | 883,837                              | 878,388                              |
| Ընդամենը կապիտալ                                                                    | <b>1,883,837</b>                     | <b>1,878,388</b>                     |
| <b>Ընդամենը պարտավորություններ և<br/>կապիտալ</b>                                    | <b>7,889,868</b>                     | <b>8,555,412</b>                     |

## Կարևոր դեպքերի ներկայացում

Հաշվետու կիսամյակի ընթացքում ընկերությունը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ: Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ: Ընկերությունը կատարել է արժեկտրոնների վճարումներ՝ համաձայն նախատեսված ժամանակացույցերի: 2026 թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում երկու անգամ վճարվել է արժեկտրոնների տոկոսներ՝ 43,793,200 ՀՀ դրամի:

Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գրավադրված ակտիվների և թողարկված պարտատոմսերի հարաբերակցությունը հաշվետու կիսամյակի սկզբին ունեցել է հետևյալ տեսքը՝

ՀՀ դրամ

|                                                                                  |                |
|----------------------------------------------------------------------------------|----------------|
| Վարկերի մնացորդը                                                                 | 425,436,427.60 |
| Վարկերի մնացորդը հաշվի առնելով օրենքի սահմանափակումները                          | 425,436,427.60 |
| Թողարկված պարտատոմսերի մնացորդը                                                  | 300,000,000    |
| Վարկերի մնացորդի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցություն* | 141.81         |

ԱՄՆ դոլար

|                                                                                  |              |
|----------------------------------------------------------------------------------|--------------|
| Վարկերի մնացորդը                                                                 | 2,763,093.04 |
| Վարկերի մնացորդը հաշվի առնելով օրենքի սահմանափակումները                          | 2,763,093.04 |
| Թողարկված պարտատոմսերի մնացորդը                                                  | 2,000,000.00 |
| Վարկերի մնացորդի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցություն* | 138.15       |

Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գրավադրված ակտիվների և թողարկված պարտատոմսերի հարաբերակցությունը հաշվետու կիսամյակի ավարտին ունեցել է հետևյալ տեսքը՝

#### ՀՀ դրամ

|                                                                                  |                |
|----------------------------------------------------------------------------------|----------------|
| Վարկերի մնացորդը                                                                 | 393,328,869.50 |
| Վարկերի մնացորդը հաշվի առնելով Օրենքի սահմանափակումները                          | 393,328,869.50 |
| Թողարկված պարտատոմսերի մնացորդը                                                  | 300,000,000    |
| Վարկերի մնացորդի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցություն* | 131.11         |

#### ԱՄՆ դոլար

|                                                                                  |              |
|----------------------------------------------------------------------------------|--------------|
| Վարկերի մնացորդը                                                                 | 2,581,542.10 |
| Վարկերի մնացորդը հաշվի առնելով Օրենքի սահմանափակումները                          | 2,581,542.10 |
| Թողարկված պարտատոմսերի մնացորդը                                                  | 2,000,000.00 |
| Վարկերի մնացորդի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցություն* | 129.08       |

Կատարված փոփոխությունների արդյունքում արդյունքում չեն խախտվել «Ապահովված Հիփոթեքային Պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործակիցները:

**Ընկերության հնարավոր հետագա զարգացման ներկայացում**

Հաշվետու կիսամյակում ընկերությունը շարունակում է ամրապնդել իր դիրքերը ֆինանսական շուկայում՝ որպես կայուն, իրացվելի և մրցունակ: Ընկերության առաքելությունն է ստեղծել ֆինանսական և տեխնոլոգիական վստահելի միջավայր՝ առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

Ընկերությունը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- ✓ Թափանցիկություն
- ✓ Փոխվստահություն
- ✓ Ազնվություն

- ✓ Նորարարություն
- ✓ Հուսալիություն
- ✓ Պատասխանատվություն
- ✓ Հոգատարություն հաճախորդների նկատմամբ

Ընկերությունը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- ✓ Ընկերության համբավ
- ✓ Արհեստավարժություն
- ✓ Նորարարություն
- ✓ Պատասխանատվություն
- ✓ Թիմային աշխատանք
- ✓ Ուսուցում և զարգացում
- ✓ Ոգեշնչվածություն

Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են ընկերության ռազմավարական զարգացման հեռանկարներով, ուստի ընկերությունը կարևորում է հետևյալ առաջնահերթությունները.

✓ Լինել թիրախային շուկաներում առաջատար՝ սպասարկման որակով և մատուցվող ֆինանսական ծառայություններով

✓ Ներգրավել նոր հաճախորդներ՝ բավարարելով նրանց ֆինանսական պահանջները և աջակցել նրանց հասնել հաջողությունների՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և ծառայությունների հասանելիություն ինչպես ընկերությունում, այնպես էլ հեռահար ծառայությունների բոլոր եղանակներով

- ✓ Ընդլայնել գործարար հարաբերությունները
- ✓ Գրավել նոր վարկային միջոցներ
- ✓ Մշակել նոր վարկային պրոդուկտներ